


---

---

## ՄԱՆՈՒԿ ԱՐՍԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



74 տարեկան հասակում կյանքից Գուացավ ճանաչված փիլիառփա, գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանուկ Արամի Հարությունյանը։ Կարճատև հիվանդությունից հետո՝ մեր օրերի կորոնավիրուսային համավարակը քայլքայիչ հարված հասցրեց նրա կյանքին։

Մ. Հարությունյանը ՀՀ ԳԱ փիլիառփայության և իրավունքի ինստիտուտի առեղջման օրվանից՝ 1969 թ. աշխատանքի էր անգել որպես ավագ լաբորատոր։ Նույն թվականին զինակոչվել էր սովորական բանակի շարքերը և զորացրվերուց հետո՝ կրկին վերադարձել էր աշխատանքի ինստիտուտ, որտեղ և աշխատում էր առայօր։ Նրա գիտական հետաքրքրությունները մշտապես կապված էին հայ հասարակության ապրելակերպի առցիալ-փիլիառփայական հիմնախնդիրների հետ։ Այդ իննդիրներին նվիրված նա հասպարամի է բազմաթիվ գիտական հոդվածներու ու մենագրություններ։ Դրանց թվում «Սոցիալիզմը և մարդու իրավունքները» (կոլեկտիվ մենագրություն, 1980 թ.), «Ապրելակերպ. անձնավորություն. գիտատեխնիկական հեղափոխություն» (1984 թ.), «Հայաստան. օտարացած հասարակություն» (համահեղինակությամբ, 2007 թ.), «Արդի հայ հասարակությունը և օտարված գիտակցության փիլիառփայությունը» (2014 թ.), «Իշխանության թգիտիմություն. Ռևոլուցիոնական ձեռնապել» (2016 թ.): Ինստիտուտում աշխատանքի տարիներին Մ. Ա. Հարությունյանը պաշտպանեց թեկնածուական ու դոկտորական ատենախոսություններ առցիալական փիլիառփայության գծով։ Նա կարմիր է ասել, ինստիտուտի բարկացուցիչ մասն էր։ Միշտ հանդիսա, բարյացիկամ և ուշադիր, մշտապես գտնվում էր ինստիտուտի անկեղծ մարդկային շփումների կենտրոնում։ Ինստիտուտի աշխատակիցները լավ հիշում են Մանուկի աշխատամենյակում ծավալիդ բազմաթիվ ու երկարատև քննարկումները, զրույցներն ու վեճերը։ Վերջին տարիներին նա ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ փիլիառփայության, առցոլուգիայի և իրավունքի ինստիտուտի Սոցիալական փիլիառփայության բաժինը։

Պրոֆեսոր Մ. Հարությունյանը համատեղության կարգով երկար տարիներ աշխատում էր ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում, գեկավարում էր կենտրոնի փիլիառփայության ամբիոնը։ Նա հանդիսանում էր կենտրոնի լավագույն դասախոսներից մեկը։ Նրա ճարտար թեզուն ու սրամիտ ուղեղը մշտապես զբագւում էին տարբեր մասնագիտությունների մագիստրանտների ու ասպիրանտների ուշադրությունը։ Սովորողները մեծ հետաքրքրությամբ էին Մ. Ա. Հարությունյանի դասախոսությունները,

Ղուլմ նրա գունազարդ հայերենով ներկայացվող համաշխարհային փիլիսոփայության տեսությունները:

Նա անտարբեր է իր հանրապետությունում ընթացող սոցիալ-քաղաքական գործընթացների նկատմամբ և գիտական վերլուծական խորը ուշադրությամբ էր արձագանքում հանրային երևություններին: ՀՀ-ում պառամենտական համակարգին անցնելուց հետո նա նախաձեռնեց նոր տեսական ծրագիր՝ նվիրված հանրապետությունում պառամենտարիզմի զարգացման հեռանկարներին: Արդյունքում նրա ղեկավարած հեղինակային խումբը 2020 թ. լույս ընծայեց Հիմնարար ու արժեքավոր մի աշխատություն՝ «Արևմտաեվրոպական և հետխորհրդային պառամենտարիզմը համեմատական հեռանկարում» խորագրով: Ցավոք, նրա շատ գիտական ծրագրեր կիսատ մնացին: Խորհրդանշական էր, որ մահը անսպասելի վրա հասակ նոյեմբերի 18-ին, երբ գիտական աշխարհը նշում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային փիլիսոփայության օրը:

Մանուկ Հարությունյանը իսկապես կյանքի փիլիսոփա էր, և իր կյանքում էլ փիլիսոփայությունը ընկալում էր որպես կյանքի ուղի: Նա սիրում էր կյանքն իր բոլոր դրսևորումներով, հեղոնիատ, առատաձեռն ու հյուրասեր մարդ էր, ընկերությունը գնահատող անձնավորություն, հետաքրքիր զրուցակից, ազատամիտ, ճշմարտախոս և կամեցող անձնավորություն:

Նրա պայծառ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում։

ՀՀ ԳԱԱ ՔԻԼԻՏՍՈՓԱՅՑՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ,  
ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ,  
«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ», ԴԵԿԸԵՄԲԵՐ, № 12, 2020 թ.